«ԱԲԱՄԱ ԹՐԵՅԴ » ՍՊԸ

Հարգելի գործընկեր,

ՀՀ ԱՆ «Թոքաբանության ազգային կենտրոն» ՊՈԱԿ -ի 2020 թվականի կարիքների համար անհրաժեշտ գնանշման հարցման բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով «ԹԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/47» ծածկագրով հայտարարված մրցույթին Ձեր կողմից ներկայացված հայտի 1.1 հավելվածում տեղ են գտել հետևյալ անհամապատասխանությունները հրավերի պահանջների նկատմամբ, այն է՝ հայտի 1.1 հավելվածում 3-րդ և 6-րդ չափաբաժիններում նշված չէ առաջարկվող ապրանքների արտադրողի անվանումը:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները (Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ..... ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը.....) խնդրում եմ ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները հրավերի պահանջների նկատմամբ՝ նշելով առաջարկվող ապրանքների արտադրողի անվանումը:

Հարգանքով ՝

«ԹԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/47» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի քարտուղար

Արթուր Աբգարյան

30.06.2020թ.